ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 188-Ա

« 05 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 216-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «1. Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության» բաժնի 1-ին կետի 6-րդ, 7-րդ, 13-րդ և 14-րդ ենթակետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի թիվ 11-Ն հրամանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 98-Ն հրամանի թիվ 1 հավելվածով հաստատված հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եվ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եվ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ 101-Ն հրամանով հաստատված հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ճանապարհային քարտեզը, «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 17-րդ ենթակետը, 49-րդ կետը, Ա. Սարգսյանի հետ 2024 թվականի մարտի 15-ին կնքված թիվ 15 աշխատանքային պայմանագրի 8-րդ կետը և հիմնավոր չհամարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի մայիսի 21-ի թիվ 01/15/3460-2024 գրության հիման վրա Ա. Սարգսյանի 2024 թվականի մայիսի 22-ի թիվ 69 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ Հանրակրթության պետական չափորոշիչը 2023-2024 ուսումնական տարվա 1-ին դասարանում ՀՀ Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրված չլինելու հանգամանքը նկատի չունենալու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի թիվ 11-Ն հրամանի 2-րդ կետով սահմանված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ 101-Ն հրամանով հաստատված հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ճանապարհային քարտեզով սահմանված ժամանակացույցը չպահպանելու համար՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աշխատանքային պայմանագրով նշված ana_sargsyan_63@mail.ru էլեկտրոնային հասցեով Ա. Սարգսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր